ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՐՏԱՎԱԶ ԳՅՈՒՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ա/Ձ Լևոն Սիմոնյանին
(ք.Հրազդան,Երևանյան 7/12,
Էլ. փոստ՝ mesropsargsyan@mail.ru)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

Ծաղկաձոր համայնքի «Արտավազ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի /այսուհետ՝ Պատվիրատու/ և Ա/Ձ Լևոն Սիմոնյանի /այսուհետ՝ Ընկերություն/ միջև 16.01.2023թ. կնքված «**ԿՄԾԱՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-23/1-1**» ծածկագրով **սննդամթերքի մատակարարման** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պատվիրատուի պահանջով Ա/Ձ Լևոն Սիմոնյանի կողմից 1,2,3,4,10,23,24,28,30,31,33,35,40,41 և 46 չափաբաժինների մասով մատակարարվել և ընդունվել է ապրանք՝ ընդհանուր 53216 /հիսուներեք հազար երկու հարյուր տասնվեց/ << դրամի չափով, որի դիմաց կատարվել է վճարում:

31.01.2023թ.-ից հետո Պատվիրատուն էլեկտրոնային փոստի միջոցով, ինչպես նաև բանավոր կերպով դիմել է Ընկերությանը՝ տեխնիկական բնութագրով նախատեսված սննդամթերք մատակարարելու պահանջով, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել, պահանջվող ապրանքները չեն մատակարարվել և Ընկերությունը չի կատարել պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

<< քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով

կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Ծաղկաձոր համայնքի «Արտավազ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի ամբողջությամբ հրաժարվում է Պայմանագրի բոլոր չափաբաժիններից /չմատակարարված քանակների մասով/, համարելով այն լուծված՝ 1590084 /մեկ միլիոն հինգ հարյուր իննսուն հազար ութսունչորս / ՀՀ դրամ գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հայտնում ենք նաև, որ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները Պատվիրատուի կողմից կնախաձեռնվի Ա/Ձ Լևոն Սիմոնյան-ին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

Ընկերության տվյալներն օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվի ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները Պատվիրատուի 220345140200000 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ծաղկաձոր համայնքի «Արտավազ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ տնօրենի ժ/պ ***Կ.Մալխասյան***